ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 01/09.6/9138-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան,

Ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով և հաշվի առնելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Ձեզ է ուղարկվում Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջադրված թեկնածությունը:

Առդիր՝ « 2 » էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մարտի 2022 թվականի N 360 - Ա

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի պաշտոնում առաջադրել Տիգրան Մարկոսյանի թեկնածությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

Տիգրան Արթուրի Մարկոսյան

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2004 - 2008 թթ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, բակալավրիատ, գերազանցության դիպլոմ
2008 - 2010 թթ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, մագիստրատուրա
2010 - 2013 թթ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, ասպիրանտուրա
ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի 001 մասնագիտական խորհրդի կողմից 14.06.2013թ. շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

2019 թվականի հունիսից առ այսօր - ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով, անդամ
2013 թվականի հունվարից առ այսօր - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, իրավաբանական կլինիկա, դասախոս-կոորդինատոր
2010 թվականից առ այսօր - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, քաղաքացիական դատավարության ամբիոն, դասախոս
2016 թվականի հոկտեմբերից առ 2019 թվականի հունիս - ՀՀ արդարադատության նախարարության «ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամ, տնօրեն
2016 թվականի սեպտեմբերից առ 2016 թվականի հոկտեմբեր - ՀՀ արդարադատության նախարարության «ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» հիմնադրամ, գործադիր մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
2015 թվականի դեկտեմբերից առ 2016 թվականի հոկտեմբեր - «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, իրավաբանական ծառայության ղեկավարի առանձին դատական գործերի գծով տեղակալ
2015 թվականի օգոստոսից առ 2015 թվականի դեկտեմբեր - «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, իրավաբանական ծառայության ղեկավարի պայմանագրերի և իրավական վերլուծության գծով տեղակալ
2014 թվականի հուլիսից առ 2015 թվականի օգոստոս - «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, իրավաբանական դեպարտամենտի պայմանագրերի և իրավական վերլուծության վարչության պետ

2014 թվականի հունվարից առ 2014 թվականի հուլիս - ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական
2013 թվականի օգոստոսից առ 2014 թվականի հունվար - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ, իրավաբանական վարչության պետի տեղակալ
2011 թվականի մարտից առ 2012 թվականի դեկտեմբեր - «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, փորձագետ
2009 թվականի ապրիլից առ 2013 թվականի հուլիս - «ԲՐԵՅՎ» ՍՊԸ, իրավաբան

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՅԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի փետրվարից առ այսօր - «Դատական իրավունք» մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնորհող ԵՊՀ-ում գործող ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհուրդ, անդամ
2022 թվականին – հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման գրավոր քննության աշխատանքների ստուգման և գնահատման հանձնաժողով, անդամ
2021 թվականի դեկտեմբերից առ 2022 թվականի մարտ - Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ (IRZ), «Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդում» ծրագիր, դատավորների և դատախազների վերապատրաստում, դասախոս
2021 թվականի ապրիլից առ այսօր - Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագիր, քաղաքացիական դատավարության ձեռնարկի մշակում, փորձագետ
2021 թվականին – դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման գրավոր քննության քաղաքացիական մասնագիտացման աշխատանքների բողոքարկման հանձնաժողով, անդամ
2021 թվականի մարտից առ ապրիլ - Իրավունքի զարգացման միջազգային կազմակերպություն (IDLO), քաղաքացիական դատավարության հարցերով փորձագետ
2021 թվականի փետրվարից առ մարտ - «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ, սնանկության գործով կառավարիչների հավակնորդների ուսուցում, դասախոս
2020 թվականի սեպտեմբերից առ այսօր - «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա ինքնակարգավորվող կազմակերպություն», սնանկության գործով կառավարիչների վերապատրաստում, դասախոս
2020 թվականի սեպտեմբերից առ դեկտեմբեր - Ասիական զարգացման բանկ, «TA 8998-REG: Հայաստանում սնանկության ոլորտի օրենսդրության զարգացում» ծրագիր, սնանկության ազգային ակադեմիական փորձագետ
2020 թվականի սեպտեմբերից առ այսօր - ՀՀ գլխավոր դատախազին առընթեր գիտամեթոդական խորհուրդ, անդամ
2020 թվականի հուլիսից առ այսօր - Սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողով, անդամ
2020 թվականի հունիսից առ այսօր - ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ոլորտի բարեփոխման, արդյունավետության բարձրացման և գործունեության կազմակերպման կատարելագործման նպատակով ստեղծված աշխատանքային խումբ, անդամ

2020 թվականի մայիսից առ հոկտեմբեր - Իրավունքի զարգացման միջազգային կազմակերպություն (IDLO), սնանկության և քաղաքացիական դատավարության հարցերով փորձագետ
2020 թվականի ապրիլից առ հուլիս - Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագիր, դատական իշխանության և կատարողական վարույթի հարցերով փորձագետ
2018 թվականի դեկտեմբերից առ 2020 թվականի հունվար - Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոն (ICSID), արբիտրաժային գործով սնանկության ոլորտի փորձագետ
2016 թվականից առ այսօր - «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ, դասախոս
2014 թվականից առ 2021 թվական - «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ, քննությունների արդյունքների գնահատման և բողոքարկման հանձնաժողովներ, անդամ
2019 թվականին – դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման գրավոր քննության քաղաքացիական մասնագիտացման աշխատանքների ստուգման և գնահատման հանձնաժողով, անդամ
2019 թվականի հունվարից առ 2019 թվականի մայիս - Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամ»-ի ֆինանսավորմամբ իրականացվող էլեկտրոնային սնանկության համակարգի ներդրմանն ուղղված «Սնանկության համակարգի բարեփոխում» ծրագիր, փորձագետ
2018 թվականից առ 2019 թվական - ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողով, անդամ
2011 թվականից առ 2019 թվական - ՀՀ փաստաբանների պալատ, անդամ
2018 թվականին - Սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման հանձնաժողով, անդամ
2017 թվականից առ 2018 թվական - «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը մշակող աշխատանքային խումբ, անդամ
2017 թվականից առ 2018 թվական - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը մշակող աշխատանքային խումբ, անդամ
2016 թվականին - Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Հայաստանի արդարադատության համակարգի անկախության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության ամրապնդումը» համատեղ ծրագրի շրջանակում ՀՀ դատական նոր օրենսգրքի հայեցակարգը մշակող աշխատանքային խումբ, փորձագետ
2016 թվականին - ՀՀ արդարադատության նախարարության կողմից ձևավորված Հայաստանի Հանրապետության 2017-2020 թվականների դատահիրավական բարեփոխումների ռազմավարական ծրագիրը մշակող աշխատանքային խումբ, անդամ
2016 թվականին - քաղաքացիական մասնագիտացման ոլորտում դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննության գնահատման հանձնաժողով, անդամ
2015 թվականի սեպտեմբերից առ 2016 թվականի օգոստոս - «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամ, դասախոս
2014 թվականի ապրիլից առ 2014 թվականի հուլիս - «Սալսա Դիվելոփմենթ» ՓԲԸ, տնօրենների խորհուրդ, անդամ
2013 թվականի օգոստոսից առ 2014 թվականի հուլիս - վերադաս հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի որոշումները քննարկող գանգատարկման խորհուրդ, անդամ

2013 թվականին - վարչական մասնագիտացման ոլորտում դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննության գնահատման հանձնաժողով, անդամ
2012 թվականի մարտից առ 2013 թվականի օգոստոս - «ԿԱՍԿԱԴ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, խորհրդի անդամ
2012 թվականին - ՀՀ արդարադատության նախարարության կողմից ձևավորված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը մշակող աշխատանքային խումբ, փորձագետ

ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Հեղինակ է մեկ մենագրության, երկու գիտագործնական ձեռնարկի և 30 գիտական հոդվածի (հասանելի են հետևյալ հղմամբ՝ http://www.ysu.am/faculties/hy/Law/section/staff/person/Tigran-A-Markosyan)

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

ռուսերեն, գերմաներեն և անգլերեն

ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	ԱԺՈ-025-Ա	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2019.06.12/38(1491) Հոդ.461	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	31.05.2019
Ստորագրող մարմինը	ՀՀ ԱԺ նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	31.05.2019
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.06.2019	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ***որոշում է.***

Տիգրան ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անդամ՝ երեք տարի պաշտոնավարման ժամկետով:

Ազգային ժողովի նախագահ **Ա. Միրզոյան**

2019 թվական, մայիսի 31
Երևան
ԱԺՈ-025-Ա